

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

_____ Արայիկ Հարությունյան _____-ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

_____ Կարինե Հարությունյան _____-ից

(դիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Սասունցի Դավթի նրբ. 12 տուն, 093 55 04 90, karine@civitasarmenia.am

(քննության վայր, հետախույսի համար, էլ. փոստի հասցե)

<<Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն- ՄԻՎԻՏԱՍ>>.

211.171.272886

(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)



ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում: Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Անվույժ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ:
2. Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության և կրթության և գիտության կամ մշակույթի կամ սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող _____ Կ. Հարությունյան

« 27 _____ » 11 2019 թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ԶԱՂՎԱԾՔ առ 2019-11-12

**«ԺՈՂՈՎՐԴԱՎՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԳԵՆԵՐՈՆ-ՍԻՎԻՏԱՍ»
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)**

Գրանցման համար 211.171.27286

Հիմնադրման տարի 2011

Գրանցման ամսաթիվ 2011-08-10

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 41147084

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 00874316

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) 176207

Էլ. փոստ info@civitasarmenia.am

Կայք www.civitasarmenia.am

Գտնվելու վայրը

Հասցե Ավան-Առինջ, 2-րդ միկրո / 2.1/19 / քն.41 Երևան 0022
ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս +374 93 550490

Գործադիր օմարնիդակալար

Պաշտոն Գործադիր տնօրեն

Անուն Ազգանուն ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՈԱՖԻԿԻ

Անձնագրային տվյալներ AS0573457 2019-04-12 009

Հասցե ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԻ ՆՐՔ. / Տ / 12 / ԲՆ. 4 ԵՐԵՐՈՒՆԻ
0008 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության և կրթության և գիտության կամ մշակույթի կամ սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

1.

2015-2017 թվականներին ստեղծվեցին «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի (Շրագիր) նախահիմքերը: 2015 թվականի նոյեմբերին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը (ՖԿԱՌ): Վերջինիս մեջ ռազմավարական ծրագրերից առավել կարևորություն է սահմանված «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրին՝ նախանշելով ծրագրի իրականացման ընդհանուր սկզբունքները:

2016-2017 թվականների ընթացքում մշակվեց սովորողների ֆինանսական կոմպետենցիաները բնութագրող մոդելը: ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, համագործակցելով, Կրթության ազգային ինստիտուտի, Խնայողական բանկերի միջազգային համագործակցության միավորման (ԽԲՄՀՄ) Հայաստանյան ներկայացուցչության, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության հետ, ստեղծեցին «Սովորողների ֆինանսական կոմպետենցիաների մատրից» փաստաթուղթը, որը սահմանում է սովորողների համար անհրաժեշտ նվազագույն ֆինանսական գիտելիքը, հմտությունները, վերաբերմունքը և վարքագիծը՝ ըստ կրթական մակարդակների: Ֆինանսական կրթությունը ներառում է 7 թեմատիկ ոլորտներ.

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում,
2. Անձնական բյուջեի կառավարում,
3. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում,
4. Պարտքերի կառավարում,
5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն,
6. Անձնական իրավունքների պաշտպանություն,
7. Ֆինանսական խարդախությունների և գեղծարարությունների կանխարգելում և պաշտպանություն:

2017 թվականին ընտրվեցին այն առարկաները, որոնցում ֆինանսական կրթությունը պետք է ինտեգրվի՝ որպես պարտադիր բաղադրիչ: Համագործակցող կողմերի համատեղ քննարկումների արդյունքում ընտրվեցին այն նվազագույն քանակի անհրաժեշտ 4 առարկաները, որոնց ծրագրում ֆինանսական կրթության բաղադրիչի ինտեգրումը առավել արդյունավետ կարող էր լինել: Մասնավորապես ընտրվեցին հետևյալ առարկաները՝

- o Ես և շրջակա աշխարհը (2-ից 4-րդ դասարաններ)

- Մաթեմատիկա (2-ից 6-րդ դասարաններ)
- Հասարակագիտություն (8-ից 11-րդ դասարաններ)
- Հանրահաշիվ (7-ից 11-րդ դասարաններ)

2017 թվականի նոյեմբերին ձևավորվեց 11 փորձագետից բաղկացած աշխատանքային խումբ, որը սկսեց Ծրագրի շրջանակում բովանդակային նյութերի մշակումը: Աշխատանքային խմբում ներգրավվեցին կրթության, ֆինանսական ոլորտի առաջատար փորձագետներ, ինչպես նաև ուսուցիչներ և հոգեբան: Աշխատանքային խմբի աշխատանքներին էականորեն աջակցել է նաև ԽԲՄՀՄ Հայաստանյան ներկայացուցչության կողմից հրավիրված կրթության ոլորտի միջազգային փորձագետ Սելիա Ալաբբին (Մեծ Բրիտանիա): Ծրագրի լիակատար իրականացման նպատակով աշխատանքային խմբի կողմից յուրաքանչյուր առարկայի համար մշակվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Առարկայական չափորոշիչ և ծրագիր
2. Ուսուցիչների վերապատրաստման մոդուլ և ծրագիր
3. Ուսուցիչների մեթոդական ձեռնարկ

2017-2018 ուսումնական տարում իրականացվել է Ծրագրի փորձարկումը: Հիմք ընդունելով առարկայական չափորոշիչները և ծրագրերը՝ ուսուցիչ վերապատրաստման մոդուլների համաձայն 2017 թվականին վերապատրաստվեցին 14 դպրոցների 46 առարկայական ուսուցիչները, որոնք ՀՀ կրթության և գիտության նախարարի 31.08.2017 N995-Ա/2 հրամանով փորձարկել են ֆինանսական կրթության բովանդակությունը առարկաներում ինտեգրելու միջոցով:

2018- 2019 թվականներին մեկնարկեցին «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն» առարկաները դասավանդող ուսուցիչների համար ֆինանսական կրթության վերապատրաստման դասընթացները՝ ընդգրկելով ՀՀ բոլոր մարզերից 352 դպրոց և 2821 ուսուցիչ:

2.

Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանի հրմանով սահմանվել են հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները, հանրակրթական հիմնական մասնագիտացված պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները, հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:

3.

2018թ-ին Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում «Կրթության բարելավում» ծրագրի իրականացման համար և դրամական միջոցների մի մասը նախատեսել է օգտագործել խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով: Խորհրդատվական ծառայությունների (Օտոայություններ) շրջանակը ներառում է հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայում հանրակրթության ընդհանուր պետական ծրագրի համատեքստում, նախատեսվող փոփոխությունների շրջանակի սահմանում՝ ելնելով Կրթության և գիտության նախարարության և այլ շահագրգիռ կողմերի հետ սերտ խորհրդակցությունների արդյունքներից, ինչպես նաև՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայման կարիքների գնահատման արդյունքների և ազգային կրթակարգի նախագծի հիման վրա, առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով համապատասխան գործընկերների և շահագրգիռ կողմերի առաջարկները, ինչպես նաև այլ երկրների՝ ուսումնական ծրագրերի ստեղծման ընթացքում կուտակված լավագույն փորձը:

4.

2019թ.-ից՝ չափորոշիչների և առարկայական ծրագրերի վերանայման գործընթաց, որի համակարգող է հանդիսանում ԵՄ-ի ծրագրի շրջանակում Համաշխարհային բանկը և «Կրթության բարելավում» ծրագիրը, որը նույնպես Համաշխարհային բանկի վարկային ծրագիրն է: Այդ շրջանակներում վերանայվում են առարկայախմբերի ծրագրերը: Գործընթացը մեկնարկվել է մայիսի սկզբից:

ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրի ու կրթության զարգացման ռազմավարության շրջանակներում, կրթության քաղաքականության վերաբերյալ ԵՄ-Հայաստան երկխոսությունն ուղղված է Հայաստանի կրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններն ու նպատակներն ուրվագծելուն և դրանց իրականացման ճանապարհային քարտեզը գծելուն: Այս ամենին աջակցում է նաև Թուրինի գործընթացը, որը հետևում է ԵՄ գործընկեր երկրներում մասնագիտական կրթության

և ուսուցման ոլորտի (ՄԿՈԻ) զարգացումներին: Թուրինի գործընթացի առանցքային սկզբունքը բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունն է: Թուրինի գործընթացը գործընկեր երկրներին հնարավորություն է տալիս մշտադիտարկել ՄԿՈԻ բարեփոխումները, գնահատել առաջընթացն ու ազդեցությունը քաղաքացիների վրա և համաձայնեցնել
ապագա
գերակայությունները:

<< Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն- ՄԻՎԻՏԱՍ >>
հասարակական կազմակերպության առարկան և նպատակները

*Կազմակերպության գործունեության նպատակն ու խնդիրներն են՝ ՀՀ օրենսդրությամբ
սահմանված կարգով՝*

- Նպաստել կրթական բարեփոխումների գործընթացին,
- Օժանդակել հանրային կրթական քաղաքականությանը և որոշումների կայացմանը,
- Բարձրացնել և խորացնել դասավանդողների ուսուցման և ուսումնառության գիտելիքները, կարողություններն ու հմտությունները,
- Նպաստել սովորողների կրթական մակարդակի բարձրացմանը,
- Նպաստել երեխաների և երիտասարդության դաստիարակությանը, առողջ ապրելակերպի և մշակույթի զարգացմանը,
- Խորացնել սովորողների գիտելիքները և հմտությունները հայագիտության և համաշխարհային պատմության, իրավական, տնտեսական և աշխարհայացքային հարցերի վերաբերյալ,
- Նպաստել Հայաստանում ժողովրդավարության խորացմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը,
- Բարձրացնել սովորողների նվիրվածությունը ժողովրդավարության և նրա հիմնարար արժեքների հանդեպ,
- Նպաստել դպրոց- համայնք կապի ամրապնդմանը, ուսումնական գործընթացում սովորողների ներգրավմանը համայնքային հիմնախնդիրների ուսումնասիրության և լուծման հարցերում,
- Նպաստել մարդու իրվունքների և բնապահպանական կրթությանը,
- Նպաստել խոցելի խմբերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրականացմանը և շահերի պաշտպանությանը,

- Նպաստել հասարակագիտության, քաղաքացիական կրթության, ընտրական, գենդերային և մեղիա կրթության զարգացմանը,
- Իրականացնել կրթական և հասարակական ծրագրեր, որոնք նպաստում են առաջնորդության, պատասխանատվության, իսադադության, հանդուրժողականության սկզբունքների զարգացմանը, կոնֆլիկտների կառավարմանը, թրաֆիքինգի դեմ պայքարին,
- Իրականացնել կրթական և հասարակագիտական հետազոտությունները:

Մեր հիմնական շահառուներն են.

- հասարակագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչներ,
- դպրոցի վարչական ղեկավարներ,
- աշակերտներ,
- ծնողներ,
- համայնքի ակտիվ անդամներ,
- մարդու իրավունքների և ժողովրդավարական կրթության փորձագետներ,
- կրթության ոլորտում որոշում կայացնողներ,
- քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ,
- հետազոտողներ:

Վերջին երկու տարում կազմակերպության կողմից
իրականացված աշխատանքները

2016 թվականից ՄԻՎԻՏԱՍ ՀԿ-ն Կենտրոնական բանկի հետ համատեղ Հայաստանի տարբեր մարզերում իրականացնում է «Քաղաքացի նախագիծ-ֆինանսատնտեսական հիմնախնդիրների ուսուցման ծրագիրը»:

Ծրագրի նպատակն էր «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում ֆինանսական գրագիտության խնդիրների արժարժումը, մեկնաբանումը, քննարկումը և ուսուցիչների ու աշակերտների շրջանում ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացումը՝ նախագծային ուսուցման միջոցով:

Նախորդող երկու տարիների ընթացքում իրականացվել են ծրագրեր.

✓ *Երևան քաղաքի թվով 30 դպրոցներում՝ 2018 թվական.*

ՀԿ-ի փորձագետները 6 ամիսների ընթացքում աշխատել են թվով 30 դպրոցների հասարակագիտության ուսուցիչների և սովորողների հետ: Ծրագրի ավարտին վեր են հանվել թվով 30 ֆինանսատնտեսական հիմնախնդիրներ և նույն թվով նախագծային հետազոտական աշխատանքներ:

Ծրագրի ավարտին անցկացվել է միջոցառում, որի ընթացքում ծրագրի մասնակից դպրոցների ուսուցիչների և աշակերտների կողմից ներկայացվել են վեր հանված համայնքային ֆինանսական հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկները: Սովորողների կողմից ընտրված հիմնախնդիրները հիմնականում վերաբերում էին մեր երկրում խնայողությունների մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը, ֆինանսական զեղծարարություններից խուսափելուն, բյուջեի արդյունավետ կառավարման հմտությունների ձևավորմանը: Նրանք վերոնշյալ խնդիրների լուծման իրենց տարբերակներով և առաջարկություններով կիսվեցին ծրագրի շնորհանդեսին մասնակից պետական և հասարակական կառույցների մոտ 80 ներկայացուցիչների հետ: Վերջիններս իրենց խորհուրդներով,

ուղղորդումներով քաջալերեցին սովորողներին շարունակելու իրենց աշխատանքները:

- ✓ *Արարատի մարզի թվով 30 դպրոցներում՝ 2019 թվական, վերը շարադրված բովանդակությամբ և արդյունքով:*
- ✓ *«Կենսաբազմազանության կանաչ ավտորուքը Արագածոտնի և Շիրակի մարզերում»* ծրագիրն իրականացվել է ԳՄՀԸ և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ 2019թ. մարտ-հունիս ամիսներին: Ծրագիրն ընդգրկել է երկու մարզերի 14 համայնքների 17 դպրոցների: ՀԿ-ի փորձագետների կողմից լրամշակվել և հրատարակվել է թվով 6 ուսումնասովանողական ձեռնարկ ուսուցիչների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից: Վերապատրաստվել են թվով 75 ուսուցիչներ (դասվարներ, կենսաբաններ և հասարակագետներ): Ծրագրի արդյունքում թվով 12 դպրոցներին սրվել են դրամաշնորհներ՝ իրականացնելու իրենց համայնքում առկա բնապահպանական հիմնախնդիրները:
- ✓ *«ԵՄ հանուն մշակույթի առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ», մեկնարկել է 2018թ. փետրվարի 1-ից և ավարտվելու է 2020թ. դեկտեմբերին: Ընդգրկում է Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերը: Իրականացվում է ԵՄ աջակցությամբ «ՀԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի», Թանգարանների աշխատակիցների և բարեկամների ասոցիացիայի, «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի» հետ համատեղ: Ծրագրի նպատակն է կրթության միջոցով նպաստել մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը:*